ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 03.03.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2887-2021 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/900-2021 գրության հիման վրա 01.03.2021թ. թիվ 26/26-1/2887-2021 գրությամբ նախաձեռնել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա»</u> <u>ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

Թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հիման վրա 31.03.2020թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, որով Ընկերությունը պարտավորվել է 2020թ. 3-րդ եռամսյակում մատակարարել 20.000 հատ սավան՝բամբակյա:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին 22.01.2021թ. ուղղված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ 23.12.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրի շրջանակներում ՍՊԸ-ն 2020թ.-ի 3-րդ եռամսյակում պետք է մատակարարի 20000 հատ սավան՝բամբակյա, որից չի մատակարարվել 16585 հատը: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծում է Համաձայնագիրը՝ նշված ապրանքի մասով:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 25.01.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի 3-րդ եռամսյակում պետք է մատակարարի 20000 հատ սավան՝բամբակյա, որից չի մատակարարվել 16585 հատը: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը:

Այնուհետև համապատասխան հիմքերը ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար /թիվ ՍՑ-ՆԳ-2021/30/:

Վերը նշված ընթացակարգը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից մերժվել է և հետևաբար «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված որոշման հիմքում դրվել է այն հիմնավորումը, որ մասնակիցը ընդգրկվում է Ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Մինչդեռ գործի փաստերից ակնհայտ է դառնում, որ Համաձայնագիրը լուծելու պայմաններում վրա չի հասնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» ենթակետով նախատեսված հիմքը, որը պահանջում է, որպեսզի լուծվի պայմանագիրը, ոչ թե համաձայնագիրը:

Թիվ ՍՑ-ՆԳ-2021/30 ծածկագրով ընթացակարգի որոշման հրապարակումից հետո՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը, որոշել է «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագիրը լուծել ևս մեկ անգամ և համապատասխան հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին 22.02.2021թ. ուղղված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը, միակողմանի մասնակի լուծում է նաև 23.12.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ նշված ապրանքատեսակի մասով:

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության կողմից 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրության (կցվում է) համաձայն՝ Պատվիրատուն դիմել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և մի շարք այլ կազմակերպությունների և հայտնել է, որ հաշվի առնելով ներկայիս պատերազմական իրավիճակը, անհրաժեշտ է կազմակերպությունների և Պատվիրատուի միջև կնքված

պայմանագրի/երի շրջանակներում՝ արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում՝ նախապատվությունը տալով «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրությանը և արտադրել 52-ից բարձր չափսերով:

Նշված հանձնարարագիրը հիմք ընդունելով՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ամենօրյա ռեժիմով արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել է «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն, որոնք ամենօրյա ռեժիմով մատակարարվել են ՀՀ ՊՆ՝ մինչև 2020թ. դեկտեմբերը ներառյալ (համապատասխան հանձնման-ընդունման ակտերը կցվում են):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Գտնում ենք, որ առկա չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը, որի համաձայն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պետք է ներառվի Ցուցակում հետևյալ հիմնավորմամբ.

ա) Նախ, գտնում ենք, որ ստորև ներկայացված օբյեկտիվ պատճառներով պայմանավորված բացակայում է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից նշված պայմանագրային պարտավորության չկատարման համար մեղքի առկայությունը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականություն-ները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ

իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1հավելվածով սահմանված պահանջնարեին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, գալիս ենք այն եզրահանգման, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, գտնում ենք, որ այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Հավելենք նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Արձանագրենք նաև, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում (տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես,

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը (տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում (տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ 2020թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարի 20000 հատ սավան՝ բամբակյա:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 25.01.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի 3-րդ եռամսյակում պետք է մատակարարի 20000 հատ սավան՝ բամբակյա, որից չի մատակարարվել 16585 հատը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը, իսկ 22.02.2021թ., հիմք ընդունելով բողոքներ քննող անձի որոշումը, նաև Պայմանագիրը:

Գտնում ենք, որ վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության կողմից 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրությամբ պատերազմական իրավիճակից ելնելով «կոստյում բամբակյա կեպիով» և «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարման պահանջով պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

բ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն հիմքով, այսինքն 2020թ. 3-րդ եռամսյակում մատակարարման ենթակա 20000 հատ բամբակյա սավանից 16585 հատը չմատակարարելու փաստի հիմքով, մասնավորապես, պայմանագրով նախատեսված պարտավորությունը՝ 16585 հատ սավանը չմատակակարելու հիմքով ընթացակարգի հիմքերը ՀՀ ՊՆ կողմից ներկայացվել են երկու անգամ:

Փաստացիորեն, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն նույն խախտումը թույլ տալու հիմքով երկու անգամ ենթարկվում է պատասխանատվության:

Մինչդեռ, նախ, պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումը մասնակցի կողմից արձանագրվել է ՀՀ ՊՆ կողմից դեռևս 2021թ. դեկտեմբերի 22-ին և հրապարակվել պաշտոնական տեղեկագրում 25.01.2021թ., որի արդյունքում լուծվել է 31.03.2020թ. կնքված թիվ 1 Համաձայնագիրը:

Այլ կերպ ասած, ՀՀ ՊՆ ևս մեկ անգամ նույն հիմքով, բայց այս անգամ 22.02.2021թ. լուծելով պայմանագիրը՝ խախտել է Կարգի 45-րդ կետով սահմանված 5 օրյա ժամկետը, քանի որ նշված հիմքը առաջացել է ոչ թե 22.02.2021թ. Պայմանագիրը լուծելով, այլ դեռևս 2020թ.-ի հունվարի 22-ին, երբ առաջին փուլով լուծվել է Համաձայնագիրը: Պայմանագիրը լուծելով՝ լուծման գործընթացը դարձել է ընդամենը ամբողջական, սակայն լուծման գործընթացի սկիզբ է հանդիսանում 25.01.2021թ. համապատասխան ծանուցումը պաշտոնական տեղեկագրում հրապարակելը:

դ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այստեղ առկա չէ նաև Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» ենթակետով նախատեսված հիմքը: Մասնավորապես, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին 22.02.2021թ. ուղղված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը, միակողմանի մասնակի լուծում է նաև 23.12.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ նշված ապրանքատեսակի մասով:

Փաստորեն, այս անգամ էլ Պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք է հանդիսացել բողոքներ քննող անձի որոշումը: Մինչդեռ, Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» ենթակետը պահանջում է, որ պայմանագրի միակողմանի լուծման համար հիմք հանդիսանա պայմանագային պարտավորության խախտումը, բայց ոչ բողոքը քննող անձի որոշումը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է իրեն չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Այնուհետև՝ 11.03.2021թ., ի լրումն վերը շարադրված դիրքորոշման, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

««Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ՆԳ-2021/54 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել էինք, ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

Թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հիման վրա 31.03.2020թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, որով պարտավորվել է 2020թ. 3-րդ եռամսյակում մատակարարել 20000 հատ սավան՝ բամբակյա:

Միաժամանակ՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության կողմից 06.10.2020թ.-ի թիվ ՆՏԱ/4804 գրության համաձայն՝ Պատվիրատուն դիմել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և մի շարք այլ կազմակերպությունների և հայտնել է, որ հաշվի առնելով ներկայիս պատերազմական իրավիճակը, անհրաժեշտ է կազմակերպությունների և Պատվիրատուի միջև կնքված պայմանագրի/երի շրջանակներում՝ արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում՝ նախապատվությունը տալով «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրությանը և արտադրել 52-ից բարձր չափսերով:

Նշված հանձնարարագիրը հիմք ընդունելով՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել է «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն, որոնք ամենօրյա ռեժիմով մատակարարվել են ՀՀ ՊՆ՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 20-ը

ներառյալ (համապատասխան հանձնման-ընդունման ակտերը ներկայացվել են Ձեզ նախորդ դիրքորոշմամբ):

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու և պետական գնման ոլորտում մասնակցության իրավունքից զրկելու հարցը որոշելիս՝ խնդրում ենք հաշվի առնել հետևյալ կարևոր փաստերը.

Նախ, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն է ապրանքների /հանդերձանքի/ մատակարարում և այս ոլորտում դերձակի ծառայություններ, ընդ որում, մատակարարման հիմնական մասը իրականացվում է պետական գնումների ոլորտում, քանի որ Ընկերությունը տարիներ ի վեր մասնակցում է պետական գնումների այս ուղղվածությամբ հայտարարվող գրեթե բոլոր մրցույթներին և տարեկան կտրվածքով պետական մարմինների հետ կնքում տասնյակից ավելի պայմանագրեր: Հանդիսանալով խոշոր հարկատու, 2017-2021թ. պետական գնումների դաշտում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն կնքել է բազմատիվ պայմանագիր՝ տարբեր պետական մարմինների և պետական հաստատությունների հետ (ցանկը կցվում է), ընդհանուր՝ 2,8 միլիարդ ՀՀ դրամ գումարի, այսինքն ՍՊԸ-ի 3,5-4 տարվա շրջանառությունը պետական գնման ոլորտում կազմել է 2,8 միլիարդ ՀՀ դրամ: Մասնավորապես, 2017թ. պետական գնման ոլորտում կնքված պայմանագրերից ՍՊԸ-ն ստացել է 500,892,263 ՀՀ դրամ, 2018թ.՝ 597,172,403 ՀՀ դրամ, 2019թ.՝ 898,552,178 ՀՀ դրամ, իսկ 2020թ.՝ 421,951,472 ՀՀ դրամ:

Վերոհիշյալը վկայում է, որ Ընկերության եկամուտների գրեթե ամբողջ մասը ստացվում է պետական գնումների ոլորոտում պետական մարմինների հետ կնքված պայմանագրերի արդյունքում, քանի որ ՍՊԸ-ի արտադրված և մատակարարվելիք ապրանքների (հանդերձանք) հիմնական պատվիրատուն և սպառողը հենց պետությունն է, և գերակշռող դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Մինչդեռ՝ ՀՀ պետական գնումների ոլորտում պետական մարմինների կողմից հայտարարվել են և շարունակվում են հայտարարվել տնտեսական նույն խմբին պատկանող ծառայությունների ձեռքբերման բազմաթիվ մրցույթներ' ողջ 2021թ. համար, իսկ 2021թ. սեպտեմբերից կհայտարարվեն նաև մրցույթներ ողջ 2022թ. համար, սակայն Ցուցակում ներառվելու պարագայում Ընկերությունը, մեր կարծիքով ոչ իրավաչափ, երկու տարի ժամկետով կզրկվի պետական գնումների մրցույթներին մասնակցելու հնարավորությունից, և արդյունքում չի կարողանալու մասնակցել որևէ պետական գնման

մրցույթի, ինչը էական վնաս կհասցնի «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին: Մասնավորապես, Ընկերությունը պետական գնման ոլորտում ամենամեղմ հաշվարկներով կզրվի տարեկան 500 մլն. ՀՀ դրամ շրջանառություն ստանալու հնարավորությունից:

Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ պետական գնման ոլորտում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմի, որպես կանոն, ներկայացվում են բավականին ցածր գնային առաջարկներ, ինչի արդյունքում ՍՊԸ-ն բազմաթիվ գնման ընթացակարգերով դառնում է հաղթող մասնակից: «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին պետական գնման ընթացակարգերին ինչն էլ իր հերթին կհանգեցնի պետության կողմից ավելի թանկ գներով նմանատիպ պայմանագրերի կնքում:

Երկրորդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ում աշխատում են 157 աշխատակից (համապատասխան ապացույցը կցվում է), և եթե ՍՊԸ-ն զրկվի պետական գնմանը մասնակցելու և շրջանառություն ապահովելու հնարավորությունից, ապա կարող է առաջացնել նաև աշխատակիցների կրճատման հարց:

Երրորդ, ինչպես արդեն նշել ենք, հաշվի առնելով պատերազմանակ իրավիճակը և Հայաստանի Հանրապետության համար առաջացած ծանրագույն խնդիրը, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ձեռնամուխ է եղել բանակի այդ պահի կարիքները իր ուժերի հնարավորության սահմաններում հոգալու գործին՝ ի վնաս իր ստանձնած այլ պարտավորությունների:

ՀՀ ՊՆ-ի հանձնարարությունը հիմք ընդունելով՝ ՍՊԸ-ն արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել է «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում ՀՀ ՊՆ-ին: Ի հավաստումն վերոհիշյալի՝ թիվ ՍՑ-ՆԳ-2021/54 ընթացակարգի քննությանը նվիրված նիստին Ձեզ ներկայացվել են համապատասխան հանձնման-ընդունման ակտերը: Նույն նիստի ժամանակ Ձեզ ներկայացվել է նաև «Հայաստան մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 02.10.2020թ. կնքված պայմանագրի հիման վրա կատարված ձմեռային հանդերձանքի մատակարարումը հավաստող փաստաթղթերը, որոնք նույնպես ապացուցում են, որ թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պայմանագրով նախատեսված բամբակյա սավան կարելու համար նախատեսված ժամկետում ՍՊԸ-ն հոգացել է ծայրահեղ հրատապություն ունեցող բանակի այլ կարիքներ:

Բողոքներ քննող անձին ենք ներկայացնում նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և «Ձեր տուն» ՍՊԸ-ի միջև 02.10.2020թ. կնքված պայմանագիրը, որի հիման վրա «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն մատակարարել է հազար հատ անձրևանոց և հազար հատ քնապարկ, իսկ «Ձեր տուն» ՍՊԸ-ն այդ ամբողջ ապրանքը նվիրաբերել է ՀՀ ՊՆ-ին՝ դրանք հանձնելով ՀՀ ՊՆ Կենտրոնական իրային բազա: Կից ներկայացվում է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և «Ձեր տուն» ՍՊԸ-ի միջև 02.10.2020թ. կնքված պայմանագիրը և «Ձեր տուն» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքի պատճեն:

Փաստորեն ստացվում է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ներկայումս կանգնել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու և պետական գնման ոլորտում մասնակցության իրավունքից զրկվելու վտանգի առջև, քանի որ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ 06.02.2021թ. գրությունը և ելնելով ՀՀ բանակի շահերից արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել է պատերազմող բանակին անհրաժեշտ ապրանքատեսակի մատակարարում՝ ի վնաս իր այլ պարտականությունների, ինչի պայմաններում, գտնում ենք, որ բացակայում է ՍՊԸ-ի մեղքը նշված հարցում:

Հարգելի պարոն Ներսիսյան, թիվ ՍՑ-ՆԳ-2021/54 որոշում կայացնելիս՝ խնդրում ենք հաշվի առնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդածի 3-րդ մասով նախատեսված հիմքը (մեղքի բացակայությունը), ինչպես նաև ստեղծված ֆորս-մաժորային իրավիճակը՝ Ձեր կողմից 10.02.2021թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2021/17 որոշման տրամաբանության լույսի ներքո:

Միևնույն ժամանակ խնդրում ենք անհրաժեշտության դեպքում սույն ընթացակարգով հրավիրել ևս մեկ նիստ՝ փաստարկները ներկայացնելու և քննարկելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.03.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/900-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 1 համաձայնագիրը /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/30 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԳՀԱՊՁԲ-20-7/2-1 պայմանագիրը՝ հիմք ընդունելով N ԳՀԱՊՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.02.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում են վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/54 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետության

կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 31.03.2020թ. կնքվել է 23.12.2019թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 1 համաձայնագիրը:

3. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 22.02.2021թ. թիվ ՆՏԱ-617 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա»ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 20000 հատ սավան՝ բամբակյա, որից 16585 հատ սավան՝ բամբակյա, չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2021թ. միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքների մասով (լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ.), սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/30 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է նաև թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» պայմանագիրը վերը նշված ապրանքների մասով՝ հիմք ընդունելով թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 22.02.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2887-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/900-2021 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության ներկայացրած առարկությունները և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ***պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (…)

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. ***Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը***: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 31.03.2020թ. կնքվել է 23.12.2019թ կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 1 համաձայնագիրը:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 22.02.2021թ. թիվ ՆՏԱ-617 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 20000 հատ սավան՝ բամբակյա, որից 16585 հատ սավան՝ բամբակյա, չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2021թ. միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքների մասով (լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ.), սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/30 որոշումը՝ ***<u>ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է նաև թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» պայմանագիրը վերը նշված</u>***

<u>ապրանքների մասով՝ հիմք ընդունելով թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/2-1» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները»:</u>

<u>Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 22.02.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից Ընկերությանն ուղղված 06.10.2020թ. թիվ ՆՏԱ-4804 գրությունը, որով Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով ներկայիս պատերազմական իրավիճակը, հայտնում եմ, որ անհրաժեշտ է Ձեր կազմակերպության և ՀՀ ՊՆ միջև կնքված պայմանագրի/երի շրջանակներում՝ արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն և ամենօրյա ռեժիմով մատակարարում՝ նախապատվությունը տալով «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակի արտադրությանը և արտադրել 52-ից բարձր չափսերով»:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն դիրքորոշմամբ հայտնել է, որ վերը նշված հանձնարարագիրը հիմք ընդունելով, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ամենօրյա ռեժիմով արտադրողական ամբողջ ծավալով կազմակերպել է «կոստյում բամբակյա կեպիով» և/կամ «կոստյում ձմեռային դաշտային» ապրանքատեսակների արտադրություն, որոնք ամենօրյա ռեժիմով մատակարարվել են ՀՀ ՊՆ՝ մինչև 2020թ. դեկտեմբերը:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Ընկերության կողմից ներկայացվել են համապատասխան հանձնման-ընդունման ակտերը, որոնց համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 06.04.2018թ. թիվ «ԲՄԾՁԲ-7/5-6» պայմանագրի շրջանակներում կնքված 01.06.2020թ. թիվ 3 համաձայնագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարությանը 05.10.2020թ. մատակարարվել է 30 հատ «Կոստյում բամբակյա կեպիով» ապրանք, 38 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 06.10.2020թ.՝ 184 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 07.10.2021թ.՝ 50 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 08.10.2021թ.՝ 110 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 09.10.2020թ.՝ 106 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 10.10.2020թ.՝ 96 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 12.10.2020թ.՝ 80 հատ

«Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 13.10.2020թ.՝ 124 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 14.10.2020թ.՝ 106 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 15.10.2020թ.՝ 110 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 16.10.2020թ.՝ 100 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 17.10.2020թ.՝ 80 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 19.10.2020թ.՝ 90 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 21.10.2020թ.՝ 46 հատ «Կոստյում ձմեռային դաշտային» ապրանք, 17.12.2020թ.՝ 2360 հատ«Կոստյում բամբակյա կեպիով» ապրանք և 20.12.2020թ.՝ 690 հատ «Կոստյում բամբակյա կեպիով» ապրանք:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության ներկայացուցիչը 05.03.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ Ընկերության աշխատակիցների մեծ մասը Պայմանագրով ստանձնած պարատավորությունների կատարման փուլում՝ սկսած հուլիս ամսից, Covid-19 համավարակի հետևանքով եղել են ինքնամեկուսացած և ի հավաստումն նշվածի ներկայացրել է աշխատակիցների անաշխատունակության թերթիկները:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտելը, այն է՝ 2020թ. 3-րդ եռամսյակում Ընկերությունը պետք է մատակարարեր 20000 հատ սավան՝ բամբակյա, որից չի մատակարարել 16585 հատ սավան՝ բամբակյա, պայմանավորված է եղել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 06.10.2020թ. թիվ ՆՏԱ-4804 գրությամբ տրված հանձնարարականի, այն է՝ պատերազմական իրավիճակից ելնելով՝ մեկ այլ՝ 06.04.2018թ. թիվ «ԲՄԾՁԲ-7/5-6» պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորության կատարմանը նախապատվություն տալու և Ընկերության կողմից նշված հանձնարարականի կատարմանն ուղղված արտադրողական ամբողջ ծավալով աշխատանքներն իրականացնելու և դրանց արդյունքում վերը շարադրված ապրանքների մատակարարման աշխատանքներն իրականացնելու հանգամանքով, ինչն էլ իր հերթին ուղեկցվել է Ընկերության աշխատակիցների Covid-19 համավարակի հետևանքով հաջորդաբար ինքնամեկուսացմամբ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Ընկերության՝ վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***<u>քանի որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն նման</u>***

պայմաններում, այն է՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2887-2021 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**